

**ԲԱԶՐԿԱՆԻ ՀՈԳԵՈՂԴՈՒ ՀԵՔԻԱԹԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII /
Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)**

Ժամանակով էլել և մի բուդալա տղա, վեր և կացել, գնացել մի քաղաք, տեհել և մի բազրկան նստած. «Բարի օր» և տալի, գլուխ վեր բերում, եղ ճամփեն ընկնում:

Բազրկանն ասըմ ա.— Ա՛յ տղա ջան, ուր ես գնում:

Թե.— Քյասիբ տղա եմ, գնում եմ նոքար մտնում, կամ մշակութին անեմ, ապրեմ:

Թե.— Ինձ մոտ ծառա չե՞ս մտնի:

Նա ասըմ ա.— Կմտնում, քու նոքարիդ էլ նոքար կմտնում:

Թե՝ հարիբ մանեթ և տալի, թե տասը մանեթ և տալի, կանգնում և կշտին:

Մի չորս տարի, հինգը տարի նրան ծառայում և:

Տենում և, որ էս էրեխեն հաշա էրեխա և, ոչ ձեռնաքաշութին ունի, ոչ հարամութին, հալալ և, սա ասըմ ա.— Որդի՛, էս չորս տարի, հինգ տարի ինձ ծառայել էս, էս էլ էրեխա չունեմ, արի ինձ հոգեորդի դա՛ռ, ինչ մալ ու դովլաթ ունեմ, քու ճակատին գրեմ:

Տղեն ռազի և ըլում, բազրկանի ձեռը պաշում և:

Գեղի մենձմենձ մարդիկը կանչում են, նստացնում են հաց ուտացնում. որ շատ ուտում են, քեֆ են անըմ, մարդիկն ասում են. — Բազրկանբաշի, էս հացի անըմը չկա:

Բազրկանը վեր և կենըմ, ասըմ ա. — Աստձանե որ թաքուն չե, ձեզանե ի՞նչ թաքցնեմ. դուք էլ գիտեք, որ էս հիշատակ չունեմ, ուզում եմ էս բեխին ինձ համար հոգեորդի վեր ունեմ:

Բոլորն, էլ ասըմ են. — Շատ լավ էս անըմ, որ վեր էս ունում:

Բերում են էդ տղին էդ բազրկանի կնգա շապիկի միջովը անց կացնում, որ միթամ թե ծնվեց:

Բերին էդ իրենց դովլաթն էլ էդ տղի գլխին դրեցին, որ նա ուտե էդ դովլաթը:

Մարդիկը էլան գնացին իրենց գործին: Մե վախտ անց կացավ, բազրկանը բերեց էդ տղին փսակեց, տուն էբեր, մի էրկու-իբեք տարի ապրեց, ինքն էլ, կնիկն էլ մահացան:

Էդ տղեն ջահել վախտն էր էկել, էկավ ձեռացավ, իրեն հոր վաթանը միտքն ընկավ: Էկավ ու դառն ու տխուր նստեց, կինն ասեց. — Ամեն հետ գեիր բեխանց հետ խաղեիր, ծիծաղեիր, հըմեկ քեզ ի՞նչ և ըլել, որ էտենց դառն ու տխուր նստած էս:

Մարդը վեր և ունըմ, թե. — Մարդն ի՞նչ, կնկանը սիրտը բաց անելն ի՞նչ:

— Թե որ բաց անիլ չես, ոչ էս քեզ կնիկ, ոչ էլ դու ինձ՝ մարդ:

Կնիկը վեր և կենում, որ տանիցը դուս ըլի, մարդը ասում ա.— Արի՛, կասեմ, արի՛:

Կնիկը գալիս և, մարդը ասըմ ա. — Իմ հայրենիքը միտս և ընկել, ուզում եմ գնամ իմ հայրենիքը:

Կնիկն ասըմ ա.— Ա՛յ մարդ, էս քաղքումը էսքան վախտը ապրել էս, գնա թագավորին ասա, թե՛ իմ հայրենիքս միտս և ընկել, խնդրում եմ ինձ ճամփա տաս: Տես ի՞նչ կասի, ընենց էլ արա:

Մարդը վեր և կենում, գնում թագավորի կուշտը:

Ասըմ ա. — Իմ հայրենիքս միտս և ընկել, խնդրում եմ ինձ ճամփա տաս՝ գնամ իմ հայրենիքը:

Թագավորն ասըմ ա. — Էսքան վախտը իմ ֆողումը աշխատել էս, ինչ որ ունես՝ մալ, դովլաթ, կնիկ, կթողուս ու ոնց որ էկել էս, ընե էլ կերթաս:

Մարդը դառն ու տխուր գնում և տանը նստում:

Կնիկը գալիս և ու ասըմ. — Ա՛յ մարդ, ի՞նչ շատ փիքք էս անըմ:

Բա.— Թագավորն ասավ. «Ինչ որ դովլաթ ունես, կնիկ ունես՝ ֆողումն էս աշխատել, կթողուս ու դարդակ էկել էս, դարդակ էլ կերթաս»:

Կնիկն ասում ա.— Ա՛յ մարդ, նա որ թագավոր ա, խո աշխարքի խելքը իրենը չի, գնա էդ գեղրանքի վրա, հալբաթ քեզ մի խելք շանց տվող կլի:

Էս մարդը վի կացավ, ճամփա ընկավ, գնաց: Գնաց մի գեղ, տեհավ մի հինգ բեխա մի կալում նստած կոճի են խաղում: Էս մարդը հոգոց քաշեց, նստեց: Նրանց միջին մի սիրունատես բեխա կար: Էն բեխան ասեց.— Բիձա ջա՛ն, խի՞ ես ֆոքոց քաշում:

Նա ասում ա.— Կոճի եք խաղում, ձեր կոճին խաղացեք, իմ դարդին դուք չեք կարալ դարման անիլ:

Տղեն ասաց.— Մի՛ ասա, տենանք դարդդ ի՞նչ ա, որ մենք կարանք ոչ դարման անենք:

Դա ասում ա.— Էսքան տարի ա ես էկել եմ մի բազրկանի մոտ հոգեորդի եմ մտել:

Տղեն ասում ա.— Քանի՞ տարեկան իր, որ էկար էդ քաղաքը:

Ասում ա.— Քսանհինգ տարեկան եմ ըլել, որ էկել եմ, հըմի ծերացել եմ, իմ հայրենիքը միտս ա ընկել, ուզում եմ, որ գնամ: Գնացի թագավորին ասի, որ ուզում եմ գնամ իմ հայրենիքը, խնդրում եմ, որ ինձ ճամփա տաս, ես գնամ: Նա էլ ասըմ ա.— «Ինչքան որ աշխատել ես, կատվիցը բռնած, կնկանից էլ բռնած, իրան կայինքիցը բռնած, ի՞նչ ունես, կթողաս, ոնց որ էկել ես, էնենց էլ կերթաս»:

Բեխեն ասըմ ա. — Նալա՛ թ, հըլե ըտուր հմար ե՞ս փիքր անում: Քանի՞ տարեկան իր, որ էկար դրա ֆողը:

Ասըմ ա. — Քսանհինգ տարեկան եմ էլել: Ասըմ ա. - Գնա թագավորին ասա՛ լա՛վ, իմ քսանհինգ տարությունը տուր ինձ, ինչ որ աշխատել եմ՝ թողնեմ քեզ, գնամ:

Էդ մարդը եդ վեր ա կենում, գնում թագավորին ասըմ, թե. — Թագավո՛ր, իմ քսանհինգ տարեկանությունը տուր ինձ, ինչ որ աշխատել եմ՝ ըստեղ թողնում ու գնամ:

Թագավորն ասում ա. — Էդ ո՞վ ա քեզ շանց տվել էդ խելքը:

Թե.— Ես փիքր արի:

Թե.— Չե՛, էդ քու խելքի բանը չի, քեզ շանց տվող ա ըլել, շանց տվողը շանց տուր, յա գլուխդ տալիս եմ:

Էդ մարդը ասում ա.— Ե՛ս կարող չեմ էդ տղին բերիլ, քու նազընուցը տուր, տանեմ էս բեխի տեղը շանց տամ:

Նազընուն վեր ա ունում, տանում ա բեխին շանց տալի:

Բեխին ասըմ են.— Թագավորը քեզ ուզըմ ա:

Բեխեն ասըմ ա.— Թագավոր՛ը ինձ ի՞նչ ա ճընանչում: Ես մի ջահել տղա:

Ուզում ա, որ վեր կենա փախչի, սրան բռնում են, կապկըպում, դնում են ձիու վրա տանըմ:

Տանըմ են. որ գնում են թագավորի աղաքը, օխտը անգամ գլուխ ա վեր բերում, գնում թագավորի աղաքը կանգնում:

Թագավորը մտիկ ա տալի էս բեխին, որ նրա յաշն ինչքան ա, մտածողութիւնը՝ ինչքան: Ինքը թախտիցը վեր ա գալի, նրան նըստացնում, իրան թագը վեր ունում, նրա գլխին դնում:

Ասում ա.— Դու ըլես իմ որդին, ես ըլեմ քու հերը, ըստուց եղը թագավորութին դու պետք ա անես:

— Եփոր ինձ թագավոր ես շինում,— ասում ա տղեն,— իմ էրկու աչքն էլ հանի, որ իմ տես ու ճանանչողներին տենամ ոչ՝ էրեսպաշտութին անեմ:

Թագավորը բերում ա էրկու աչքն էլ հանիլ ա տալի:

Էդ տղեն ընենց մի դիվան ա անում, որ ոչ մի թագավորի ձենը աստված լսիլ չի, դրանը լսում ա:

Մին օր աստված Քրիստոսին դարկում ա էդ թագավորի կուշտը, որ փորձի: Քրիստոսը նստում ա մի դաթրի վրա, գալի թագավորի կուշտը: Ճմփին տենում ա՝ մի պառավ կնիկ

Ֆորթը մորն ա տվել, ուզում ա կթե: Խաչակնիքում ա՝ ֆորթը մորը թողնում ա, դաթրի եղնա գալի: Պառավը ուշունց ա տալի, անիծում ա, թե. «Էդ իմ կովի ֆորթն ա, ո՞ւր ես տանում»: Քրիստոսն էլ ասըմ ա.— Իմ դաթրի քուռակն ա, թե քու կովի ֆորթն ա, իմ դաթրի եղնեն խի՞ ա գալի:

Պառավը լաց ըլելեն, ուշունց տալեն գնում ա թագավորի կուշտը: Գնում ա թագավորին գանգատում, թե. «Ըսենց մին մարդ դաթրին վեր էլած գեր, էկավ ֆորթիս խլեց, տարավ, ասըմ ա թե՛ էս իմ դաթրի քուռակն ա, քու կովի հորթը չէ»:

Թագավորը կանչում ա Քրիստոսին, թե.— Ինչի՞ ես դրա ֆորթը խլել:

Քրիստոսն ասըմ ա.— Իմ դաթրի քուռակն ա:

Թագավորը ընկնում ա մտքի եղնը, էրկու սհաթ քաշում ա:

Քրիստոսն ասըմ ա.— Թագավո՛ր, ի՞նչ շատ մտածեցիր, մի քուռակի բան էր, յա պառավին տուր, յա ինձ, վի կենամ, գնամ իմ բանը:

Թագավորն ասըմ ա.— Էդ մի հեշտ բանն ա. չաթինն էն ա, որ ֆլան մարդը ծովի դրաղին արտ ունի, ձուկը սովորել ա, դուս ա գալի արածըմ, եդ գնում ծովը:

Քրիստոսն ասըմ ա.— Շատ բան եմ լսել, լսել չեմ, որ ձուկը արտն արածի, եդ մտնու ծով:

Թագավորն էլ ասըմ ա.— Ես էլ շատ բան ի լսել, հըմա դաթրրին քուռակ չի լսել:

Քրիստոսը խաչակնքում ա՝ թագավորի էրկու աչքն էլ սղանում ա, ու պառավը վեր ա ունում իրա հորթը, գնում: Քրիստոսն էլ համբառնում ա:

Երկնքիցը իրեք խնձոր վեր ընկավ. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ ալամ աշխարքին: Բարին ըստի, չարին ընդի: